ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ՀԷՐՎԵ ԴԸ ՇԱՐԵԹՆ ԱՅՑԵԼԵՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌԻՆ

Ապրիլի 2-ին, երևան ժամանելուց անմիջապես հետո, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարության պատվիրակությունը՝ արտաքին գործոց նախարար Հէրվե Դը Շարեթի գլխավորությամբ: Վեհարանի իր աշխատասենյակում հյուրերին ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ջերմ զրույցի ընթացքում պրն. Շարեթը Նորին Սրբությանը ծանոթացրեց իր այցելության նպատակներին՝ հավաստիացնելով, որ Ֆրանսիան և Մինսկի խմբի անդամ մյուս երկրները կանեն իրենց գերագույն կարելին՝ դարաբաղյան հակամարտությանը գործնական և դրական լուծում տալու համար:

Վեհափառ Հայրապետն իր շնորհակալությունն ու գնահատանքն արտահայտեց այդ կապակցությամբ և հույս հայտնեց, որ խնդրի հարթման պարագայում անպայմանորեն կհարգվեն Արցախի ժողովրդի արդար իրավունքները ու պահանջները:

Նորին Սրբությունն ու արտաքին գործոց նախարարը վերհիշեցին նաև հունվարին Փարիզում կայացած իրենց վերջին հանդիպումը և վստահաբար հաստատեցին, որ ֆրանսիացի և հայ ժողովուրդների բարեկամությունը առավել ամրապնդվելու միտում ունի:

Մեկնելուց առաջ պրն. Շարեթը գրառում կատարեց պատվավոր հյուրերի հուշամատյանում:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՆ ԱՅՑԵԼԵՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ապրիլի 12-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց օրերս Հայաստանի Հանրապետության նախագահին իր հավատարմագիրը հանձնած Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Միթչիներին:

Ողջունելով դեսպանի այցելությունը Մայր Աթոռ, Վեհափառ Հայրապետը հանգամանորեն ներկայացրեց Հայ Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիրքն ու դերը հայ ժողովրդի և ընդհանուր քրիստոնյա եկեղեցիների կյանքում: Նորին Սրբությունը խոսեց նաև երկու եկեղեցիների պատմական սերտ հարաբերությունների մասին և հույս հայտնեց, որ այս վճռական ժամանակներում Մեծ Բրիտանիայի պետությունն ու եկեղեցին, ինչպես և բարեսիրական կազմակերպությունները զորավիգ կկանգնեն Հայաստանին ու Մայր Աթոռին: